

Արեւելեան Հայք կը հաւատան թէ Ս. Աստուածածին միշտ կոյս մնացած է, բայց կ'ըսեն թէ սկզբնական մեղքէ ազատ չէ մնացած⁷. ունին որթողոքներու եւ լատինաց հետ եօթը խորհուրդ, բայց ի հարկաւորութեան՝ երախային մահուան վտանգի ատեն նաեւ աշխարհականի ձեռօք մկրտութիւն չեն տար:

Մկրտութեան ծէսն ու արարողութիւնը քիչ մը կը տարբերի որթողոքներէն. այսպէս՝ երախայն ամէն մէկ անգամ ջուրն ընկղմելուն աստուածային երից անձանց անունները զատ զատ կ'ըսեն, եւ իւրաքանչիւր կնքահայր մկրտութեան ժամանակ ամէն մէկ ձեռքին մէջ ճրագ մը կը բռնէ: Հայք մկրտութիւնը կը համարին նշան՝ Բրիստոսի երեքօրեայ մահուան: Անմիջապէս մկրտութենէն ետեւ նոր մկրտեալն սուրբ մեռնոյ կ'օծուի,⁸ ինչպէս նաեւ որթողոքք անմիջապէս մկրտութենէ ետեւ կ'օծեն:

Արեւմտեան աստուածաբանից⁹ այն խօսքն՝ թէ նոր մկրտեալ տղուն անմիջապէս Վերջին օծումն կը տրուի, ինչպէս նաեւ այն՝ թէ հայ աստուածաբանք զայս այնու կ'արդարացնեն, որ հայ ազգն ամէն տեսակ հալածանքներով ցրուեալ ըլլալուն՝ զիւրաւ կարելի չէ այս խորհուրդը մատակարարող քահանայ գտնել, սխալ է. վասն զի երբեք Վերջին օծում չի տրուիր աշխարհականաց:

Նորակնուք մանկան անմիջապէս Հաղորդութիւն կը տրուի հետեւեալ կերպով. քահանայն մէկ մատը կը թաթխէ բաժակին մէջ,